տասներկու գիւղեր, որոնց մէջ բնակվում են քրդերը և մեծ մասամբ թաթարները: Զնայեած, որ ես ձմեռնամուտին էի ճանապարհորդում այդ դեղաձիծաղ վայրերումը և ձիւնը նոցա բարձրութեանց վերայ օղակի պէս շրջապատել էր ամեն կողմից, բայց ինքն ըստ ինքեան երևում էր, որ այդ բեղմնաւոր և հովասուն տեղերը շատ յարմար ապաստարաններ են խաղաղ երկրագործների և հովիւների համար և արժանաւոր ամարանոցներ են եղել մեր նախնի թագաւորազուններին: Վերջի պատերազմի ժամանակ Աւաջուղը առատութեամբ մատակարարեց Ռուսաց Երևանեան բանակին գարի և ցորեան: Աւաջուղը առանձին խանութիւն է Պարսկաստանի իշխանութեան տակը, նորա գլխաւոր տեղին է Քիլիսա-քեանդ, ուր նստում է Փաշա-իանը, երկրի կառավարիչը:

Աւաջուղին կից դէպի հարաւ ընկնում է Թայզաբարայ հովիտը 61° 45′, 62° 0′, 39°15′, 39° 0′ լայնութեան և երկայնութեան տակ: Արևմուտքից սահմանակից է Տաճկա-Հայաստանի Մահմդանք և Աբաղայ դաշտերն: Այս ջրալի հովիտը երկարացած է հիւսիսից դէպի հարաւ, ունի ընտիր մարգագետիններ և պտղատու վարելահողեր: Տասն մէկ գիւղեր են շինված այս հովտումը, ուր ապրում են քրդեր և թաթարներ: Քրդերը մեծ մասամբ ապրում են նորա արօտալի լեռների վերայ: Այս աշխարհի գլխաւոր տեղին է Ղարայ-նի, ուր նստում